ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/4

ք. Երևան «15» 04 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լուսապսակ>> Խմբագրություն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ծ. Տիրատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4722000 /չորս միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Լուսապսակ>> խմբագրություն>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Մ. Բաղրամյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Բանկ Հայէկոնոմբանկ
գործառնական վարչություն	163008111425
ՀՎՀՀ 9000011005122	ՀՎՀՀ 00052575
ՀԿՀՀ 02512868	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ն. Հարությունյան	_____ Ծ. Տիրատուրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » 04 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	22211500/2	Ամսագիր-1, <<Ուրախ պարտեզ>>	<<Սամարկ>> ՍՊԸ տպագրատուն, ՀՀ	**<u>Բովանդակային չափանիշներ</u>** Ամսագիրը նախատեսվում է նախադպրոցական տարիքի երեխաների համար, ծնողների և դաստիարակների համար: **Ելնելով երեխաների տարիքային առանձնահատկությունից ամսագրում** պետք է ներառվի՝ 1. հայ և համաշխարհային անվանի մանկագիրների ստեղծագործությունները, 2.հաղորդակցվելու և վարվեցողության տարրական կանոնների ուսուցմանը նվիրված խաղեր և մեթոդականներ, 3.ազգային ավանդույթների և արժեքների վերաբերյալ խաղեր, նկարներ, նյութեր, մանկական պատումներ և այլն՝ հիմքում ունենալով առօրյա փորձը և օրինակները, 4.գործնական կիրառության նյութեր, խաղեր որոնք ունեն ճանաչողական բնույթ (բնություն, շրջակա միջավայր, գույներ, երկրաչափական պատկերներ և այլն), 5.մայրենիի և օտար լեզուների տառաճանաչության և գրաճանաչության վերաբերյալ նյութեր, 6.մտածողությունը և դիտողականությունը զարգացնող հետաքրքրաշարժ խաղեր, առաջադրանքներ և այլ նյութեր, 7.գեղագիտական դաստիարակությունը զարգացնող նկարներ, երգեր, խաղեր և այլ նյութեր, 8.դաստիարակչական /բարոյական, ֆիզիկական, աշխատանքային և բնապահպանական, կարգապահական և այլն/ բնույթի խաղեր, երգեր, պարեր՝ երեխաների համար և նյութեր՝ ծնողների ու դաստիարակների	հատ	4650	480	2232000	**<u>1-ին համարը</u>** (1550 հատ)՝ ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացույցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում **<u>2-րդ համարը</u>** (1550 հատ)՝ մինչև 31.08.2019թ:

				համար, 9.երեխաների անձնական հիգիենիայի պահպանման կանոններին վերաբերող նյութեր, 10.հանրօգուտ աշխատանքերին և տնային գործերին վերաբերող նյութեր, 11. շրջակա միջավայրը և մարդիկ, 12.հանելուկներ, առակներ 13.փոքրիկ բնասերները, 14.մաթեմատիկան խաղերում և այլն: 15.Ուսումնամեթոդական նյութեր դաստիարակների և ծնողների համար(երեխաների հետ համատեղ ընթերցանության հմար): 16.Ամսագիրը պետք է համագործակցի նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ՝ երեխաների սովորածը համապատասխան նյութերով ամրապնդելու նպատակով՝ չկրկնելով ուսումնական ծրագիրը: **Ամսագիրը նպաստում է՝** 1.երեխայի գեղարվեստական, ճանաչողական և գեղագիտական ճաշակի ձևավորմանը, 2.բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, ընկալման և ընբռնման գործընթացների ձևավորմանը, 3.ծնողների կողմնորոշմանը՝ երեխայի ուսուցման և դաստիարակության գործընթացում, 4.ազգային ավանդույթների և արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը, 5.խթանում է դպրոցական տարիքի երեխաների աշխատանքային, բնապահպանական, բարոյական, գեղագիտական, հայրենասիրական ու կարգապահական դաստիարակությանը, ինչպես նաև ինքնադաստիարակության խթանմանը, 6.ֆիզիկական առողջությանը, 7.տառաճանաչությանը և գրաճանաչությանը, մայրենի լեզվի ամրակայմանը, խոսքի ձևավորմանը և օտար լեզուների ուսուցմանը, 8.հաշվելու կարողությունների զարգացմանը, 9.ընդհանուր մտածողության զարգացմանը, 10.աշխատելու և հանրօգուտ աշխատանքներ կատարելու մղումների ձևավորմանը, 11.ստեղծագործական ունակությունների զարգացմանը, 12.անհատականության ձևավորմանը և այլն, 13.մանկական հետաքրքրասիրության բավարարմանը, 14.շրջապատի, շրջակա միջավայրի և բության վրա ուշադրության սեվեռմանը, 15.մանկական հետաքրքրասիրության բավարարմանը, 16.ստացած գիտելիքների կիրառմանը, 17.ծնողներին՝ ճիշտ հասկանալու տվյալ տարիքի երեխաների առանձնահատկությունները, 18.երեխաների սովորածի ամրապնդմանը					**3-րդ համարը** (1550 հատ)՝ մինչև 15.12.2019թ.:

				Տեխնիկական չափանիշները • մամուլը՝ 2 տ/մ • չափսը՝ 60/80, 1/8 • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի), 90 գր. • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի), • պարբերականությունը՝ երեք համար, յուաքանչյուր համարը՝ 1550 տպաքանակով:					
	22211500/3	Ամսագիր-2, <<Կախարդական բանալի>>	<<Սամարկ>> ՍՊԸ տպագրատուն, <<	**Բովանդակային չափանիշներ** Ամսագիրը նախատեսվում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների, ծնողների և մանկավարժների համար: **Ամսագիրը՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկությունից իր մեջ պետք է պարունակի** 1.զվարճալի, զարմանահրաշ ու հետաքրքրաշարժ բնույթի նյութեր կենդանիների, բույսերի, տիեզերքի առհասարակ բնագիտության, աշխարհագրության, պատմության, արվեստի, արհեստի և այլ թեմաների վերաբերյալ, 2.կրտսեր դպրոցականներին կարդալ, հաշվել, նկարել, կառուցել, ինչպես նաև տեխնոլոգիական և տնյանագործական աշխատանքներ սովորեցնող, 3.կենցաղի, ընտանեկան կյանքի, դպրոցական կյանքի, տարբեր զբաղմունքների ու հոբիների վերաբերյալ, 4.հայ և համաշխարհային անվանի ստեղծագործողների ստեղծագործություններին և նրանց գործերին ծանոթացնող, 5.հաղորդակցվելու և վարվեցողության կանոնների ուսուցմանը նվիրված օրինակներ, նյութեր և մեթոդականներ (ուսուցիչների և ծնողների համար), 6.ազգային ավանդույթների և արժեքների վերաբերյալ նյութեր, մանկական պատումներ և այլն՝ հիմքում ունենալով առօրյա փորձը և օրինակը, 7.գործնական կիրառության նյութեր, որոնք ունեն ճանաչողական բնույթ (բնություն, շրջակա միջավայր և այլն), 8.մայրենիի և օտար լեզուների վերաբերյալ հետաքրքրաշարժ նյութեր, 9.մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը, ընկալման և ըմբռման ընդունակությունները զարգացնող հետաքրքրաշարժ խաղեր և նյութեր, 10.գեղագիտական ճաշակը ձևավորող և զարգացնող նկարներ, երգեր, խաղեր և այլ նյութեր, 11.դաստիարակչական /բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, բնապահպանական, կարգապահական և այլն/ բնույթի խաղեր, երգեր, պարեր՝ երեխաների համար, նյութեր՝ ծնողների և ուսուցիչների համար, 12.երեխաների անձնական հիգիենայի պահպանման կանոններին վերաբերող նյութեր, 13.Հանրօգուտ աշխատանքերին և տնային գործերին վերաբերող նյութեր, Ամսագրում նախատեսվում են՝ շրջակա միջավայրը և մարդիկ, փոքրիկ բնասերները, ինչպես նաև ժամանցային էջ, հանելուկներ և առակներ:	հատ	4650	535,48	2490000	**1-ին համարը** (1550 հատ)՝ ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացույցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում **2-րդ համարը** (1550 հատ)" մինչև 31.08.2019թ: **3-րդ համարը** (1550 հատ)՝ մինչև 15.12.2019թ.:

				Ամսագիրը նպաստում է՝ 1.կրտսեր դպրացականների մտածողության զարգացմանը, 2.մտավոր (մտածողություն, հիշողություն, ընկալում, ըմբռնում և այլն) ու ֆիզիկական ընդունակությունների ճանաչմանն ու զարգացմանը, 3.մարդու բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ու անձի ձևավորման գործընթացներին, 4.երեխաների հաղորդակցական հարաբերություններին, 5.ստեղծագործական ունակությունների զարգացմանը 6.բազմակարծության, բարոյական արժեքների, ազգային և համամարդկային մշակույթի նկատմամբ սիրո, հարգանքի ձևավորմանը ինչպես նաև սեփական կարծիքի ձևավորմանը, 7. ձևավորմանը, 8.օրինապահ քաղաքացու ձևավորմանը, 9.երեխաներին հետաքրքրող հարցերի վեր հանմանը, **<u>Տեխնիկական չափանիշները</u>** • մամուլը՝ 2 տ/մ • չափսը՝ 60/80, 1/8 • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի գույներ), 90 գր. • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի գույներ), • պարբերականը՝ երեք համար, յուրաքանչյուր համարը՝ 1550 տպաքանակով:					

**Մատակարարման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

<u>1-2 չափաբաժինների համար</u>

1.Ամսագրերում ընդգրկված նյութերում առկա տեղեկություններն ու փաստերը պետք է լինեն հավաստի, ստուգելի և ըստ անհրաժեշտության՝ ունենան աղբյուրների հղումներ:

2.Նյութի համապատասխանությունը երեխաների տարիքային առանձնահատկություններին, նրանց իմացական հնարավորություններին և կրթական պատրաստվածության մակարդակին: Ընդգրկված նյութերի շարադրանքը և ներկայացման ձևը պետք է համապատասխանի այն տարիքային խմբի սովորողների ընկալումներին, ում համար նախատեսված է տվյալ ամսագիրը:

3.Լեզվի հստակություն (ըմբռնելիություն), ճշգրտություն, անաղարտություն, համապատասխանությունը ընթերցողի տարիքային ընկալման առանձնահատկություններին:

4.Ամսագրերից յուրաքանչյուրը պետք է ունենա բովանդակային որոշակի բնագավառի (կամ բնագավառների) ուղղվածություն այնպես, որ տարբեր ամսագրերը միասին վերցրած արտացոլեն սովորողների՝ ուսումնական տարբեր բնագավառների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրասիրությունները, այդ թվում՝

գիտության, արվեստի տեխնիկայի ու տեխնոլոգիաների , սպորտի, առողջության, ժամանակակից հասարակության և մարդու, մշակույթի և ազգային կյանքի վերաբերյալ:

5.Ամսագրերում զետեղված նյութերը, որպես կանոն, չեն կրկնելու դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում ընդգրկված նյութերի բովանդակությունը: Տեղեկատվության ազատությունը սովորողներին հնարավորություն է տալու հաղթահարելու կրթական ծրագրերով նախատեսված բովանդակության սահմանափակությունը, նպաստելու է բազմակարծության ձևավորմանը և ինքնուրույն մտածողության զարգացմանը, լրացնելու է նախատեսված բովանդակությանը՝ մեկնաբանված այլ մեթոդաբանությամբ:

6.Ամսագրերը պետք է նպաստեն երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելուն: Ամսագրերը պետք է ունենան կրթական գործընթացին, երեխաների ստեղծագործական մտքին, նախասիրություններին ինչպես նաև սոցիալ-բարոյական ուղղվածությանը աջակցող բաղադրիչ:

7.Ծնողները ևս կարող են հանդես գալ, որպես հոդվածագիրներ:

8. Նախադպրոցական և դպրոցական (կրտսեր, միջին, ավագ) տարիքի երեխաների համար նախատեսված ամսագրերի տպագրական որակը պետք է համապատասխանի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N71-N որոշման Հավելված N2-ի 3-րդ կետով ամրագրված և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 28 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու մասին>> կարգով գործողության մեջ դրված <<Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N797 որոշմամբ ընդունված <<Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին>> (ՄՄ ՏԿ 007/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ>>-ի պահանջներին:

9. Ամսագրերը պետք է ունենան անվանում:

10.Ելքային տեղեկություններ՝ երեխաների և դեռահասների համար տպագրվող ամսագրերի հրատարակչական որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող <<ГОСТ 4.482-87 <<Издания книжные и журналные>>. Издательско-полиграфическое оформление и полиграфическое исполнение>> պետական ստանդարտներին:

11.Հատուկ նշագրում՝ ամսագրերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

12.Ամսագրերի բաշխումն իրականացնում է կատարողը՝ համաձայն կից բաշխման ցուցակի:

13.Ամսագրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

_____Օ. Տիրատուրյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

1 և 2 չափաբաժիններով նախատեսված ամսագրերի յուրաքանչյուր համարի /1550 տպաքանակ/

Չափաբաժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն[1]	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն[2]	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն[2]	Ընդամենը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	15	17	
1	Ամսագիր 1	262	102	167	108	70	106	100	126	162	41	106	200	1550	Հատկացվում է ՀՀ մանկապարտեզներին
2	Ամսագիր 2	207	80	155	158	125	97	124	120	114	53	117	200	1550	Հատկացվում է ՀՀ հիմնական և միջնակարգ դպրոցներին

Ծանոթություն

1.Հանձնվում են Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն:

2.Հանձնվում են մարզպետարանների կրթության, սպորտի և մշակույթի վարչություններ, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ծ. Տիրատուրյան

Հավելված N 2
«15» 04 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա են վճարման 2019թ պետական բյուջեից.										Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ			9 ամիս			Տարի			
			-	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբերի 20-ը	
1	22211500/2	Ամսագիր-1		744.0	744.0	744.0	744.0	1488.0	1488.0	1488.0	1488.0	2232.0	2232.0
2	22211500/3	Ամսագիր-2		830.0	830.0	830.0	830.0	1660.0	1660.0	1660.0	1660.0	2490.0	2490.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ծ. Տիրատուրյան